

ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ԳԻՒՂԵՐ

Բորչալուի գաւառում բացի Հայաբնակ գիւղերից, կան նաև Թրքաբնակ, Ղրացաբնակ, յունաբնակ և ռուսաբնակ գիւղեր և երկու գերմանական գաղութներ: Թուրքաբնակ, վրացաբնակ և յունաբնակ գիւղերը զրեթէ ոչնչով չեն տարբերում Հայաբնակներից. միևնոյն ծուռն ու մուռ, անկանոն, կեղտոտ փողոցները, միևնոյն կիսազետնափոր կամ եղակի նոր ձևի տրները, միևնոյն «շինամէջը» — զիւղական հրապարակը: Այնինչ ռուսաբնակ գիւղերը և մանաւանդ գերմանական գաղութները բոլորովին տարբերում են: Այս պատճառով և՛ զանց առնելով նկարագրել վերոյիշեալ Թուրք, վրացի և յոյն ժողովրդի բնակած գիւղերը, ուր մանաւանդ չկան մի առանձին ուշադրութեան արժանի հնութիւն, մի ճարտարապետական, նըշանաւոր շէնք, բացի վանքերից, որ նկարագրել ենք վանքերի բաժնում, մենք բաւականանում ենք միայն յիշատակելով այդ ազգերի մեծ գիւղերի անունները և անցնում ենք նկարագրելու ռուսաբնակ տիպական գիւղը և գերմանական գաղութը:

Թուրքաբնակ գիւղերն ընդհանրապէս բռնում են գաւառի ամենալաւ, հարթ և արգաւանդ մասը — Բորչալուի հարթութիւնը. բայց չնայելով որան, ամենակեղտոտ և ամենաողորմելիներն են: Ամենամեծ գիւղը Սարվաննէ, 329 տուն բնակչով, 1283 ար. 921 իգ. ի միասին՝ 2204 հոգի: Ապա Գեաւուրարիւր՝ 270 տուն. 1010 ար. 760 իգ. միասին՝ 1770 հոգի: Ղըզլը-Աջլօն՝ 274 տուն. 1069 ար. 767 իգ. ի միասին՝ 1836 հոգի: Սաղախլօն՝ 191 տուն. 745 ար. 535 իգ. ի միասին՝ 1280 հոգի: Փախրալուն՝ 170 տուն. 663 ար. 476 իգ. ի միասին՝ 1139 հոգի: Սարչալուն՝ 161 տուն. 628 ար. 451 իգ. ի միասին՝ 1079 հոգի: Բոլնիս-Քափանակչին՝ 169 տուն. 833 ար. 570 իգ. ի միասին՝ 1403 հոգի: Արբիլուն՝ 137 տուն. 524 ար. 384 իգ. ի միասին՝ 808 հոգի: Ղաչաղանը 110 տուն. 456 ար. 328 իգ. ի միասին՝ 784 հոգի: Ղոսալուն՝ 78 տուն, 371 ար. 266 իգ. ի միասին՝ 637 հոգի, և այլն:

Վրացարնակ զիւղերից նշանաւոր են Մեծ Գոմարէտը 130 տուն. 445 ար. 442 իգ. ի միասին՝ 887 հոգի: Կալամշան՝ 50 տուն. 169 ար. 155 իգ. ի միասին՝ 324 հոգի: Միջան՝ 40 տուն. 141 ար. 131 իգ. ի միասին՝ 272 հոգի:

Յունարնակ զիւղերից Ալավէրտին, որի բնակիչները Գիւմիշխանից են զաղթած և որոնցից շատերը մաս ունին Համանուն պղնձահանքում, իւր մաքրութեամբ և քաղաքակրթութեամբ բարձր է կոնգնած միւս բոլոր լուսական զիւղերից: Միւս զիւղերից առանձին ուշադրութեան արժանի են Ծալկայի լուսարնակ զիւղերը, որոնց բնակիչներից շատերը լուսարէն չգիտեն և խօշում են թուրքերէն և Հայերէն: Կարելի է ենթադրել, որ դրանք յոյներ չլինին, քանի որ դրանց տիպը տեղական Հայ ժողովրդի տիպից առանձնապէս չի տարբերուում և ընտանեկան բառերի մէջ լուսարէնի հետքեր բոլորովին չկան, այլ բիւզանդական տիրապետութեան միջոցին լուսադաւանութիւն ընդունած կարնեցի Հայեր: Սակայն այս խնդիրը կարօտ է լւարջ ուսումնասիրութեան:

Յունարնակ ամենամեծ զիւղերն են՝ Բեշտաշէն 201 տուն. 785 ար. 761 իգ. իմիասին՝ 1546 հոգի: Բարմակսրդ, 140 տուն. 479 ար. 456 իգ. ի միասին՝ 935 հոգի: Սպրետ 105 տուն. 486 ար. 436 իգ. ի միասին՝ 122 հոգի:

Ռուսաց զիւղերից Պրիլույնօյի, Ռուսաց Գեռգեուի. Նոր Ալէքսանրովկի, Նովո-Պոկրովկայի, Ռուսաց Ջալալ-Օղլու բնակիչները օրդոգոքս են, Վօրօնցովկի, Նովո-Միխայիլովկի՝ մալական, իսկ Բաշքիչուտի, Արմաշէնի, Ռուսաց Ղարաքիլիսի՝ զոխորուր:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ այս երեք դաւանութեան պատկանող միւսնոյն ազգի զիւղերը միմեանցից դրեթէ ոչնչով չեն տարբերուում. միւսնոյն երկար, լայն ու կանոնաւոր փողոցը կամ փողոցներն են, որոնց երկու կողմում բարձրանում են մի, երբեմն էլ, երկարկանի, սպիտակացրած, կրդմիւնտրածածկ տները, իրենց փոքր պատուհաններով և պատշգամբներով և ընդարձակ դաւիթներով, ուր դռնուում են ախոռը, լարդանոցը, բաղանիսը, և ուր բարձրանում են խոտի,

Հնձած Հացահատիկները ահագին դեղերը: Սրդողոքս ռուսների ամենանշանաւոր զիւղը՝ Պրիվոլնին՝ գտնւում է Ջալալ-օղլից դէպի Հիւսիս, Վօրօնցովկից դէպի արեւելք, Գրեքդ գետի Համանուն վտակից փոքր ինչ հեռու: Գիւղը, որ բաղկացած է մի գլխաւոր, երկայն և լայն փողոցից, ձգւում է մի Հարթութեան վրայ և շրջապատուած է բլրակներով: Գիւղի կենտրոնում բացւում է մի բաւական ընդարձակ Հրապարակ, որի մէջ տեղը բարձրանում է բաւական զեղեցիկ եկեղեցին: Փողոցի երկու կողմում դտնւում են կղմինտրածածկ, մի և երկյարկանի, սպիտակացրած տները, իրենց ընդարձակ դաւիթներով:

Գիւղում կայ պետական միդասեան դպրոց, ինչպէս նաև երկու խանութ: Բնակիչները օրդողոքս ռուսներ են, 200 տուն, 779 ար. 783 իգ. իմիասին՝ 1562 Հոգի: Բացի սովորական պարապմունքից՝ որանք պարապում են ռալլապանութեամբ և սալլեր ու մանաւանդ անիւներ շինելով: Տեղական ընթերցից զովուած է կարտօֆիլը, որ գլխաւորապէս վաճառւում է Թիֆլիսում:

Մալաղանների ամենանշանաւոր զիւղը Վօրօնցովկան է, որ տարածւում է Ջալալ-օղլուց դէպի Հիւսիս, Ջամբաղչի խճուղու երկու կողմում, մօտ երեք մերստ երկարութեամբ: Մի և երկյարկանի, սպիտակ, կղմինտրածածկ տները, ներկած պատշգամբներով և ընդարձակ դաւիթներով բաւական զեղեցիկ տեսք են տալիս: Գրեթէ կենտրոնում գտնւում է մալաղանների աղօթատունը, որ սովորական տներից ոչնչով չի տարբերւում: Մի քիչ հեռու դտնւում է պետական երկդասեան դպրոցը: Բնակիչները 300 տուն են. 1296 ար. 1256 իգ. ի միասին՝ 2555 Հոգի: Սովորական պարապմունքից զատ այս գիւղացիները պարապում են նաև մեղուապահութեամբ և սալլապանութեամբ, սալլեր, անիւներ շինելով: Գիւղացիները 14000 դեսիասին Հող են գնել շրջակայ կալուածատէրերից:

Դոխոքուրների ամենանշանաւոր զիւղը Բաշքիչուտն է, Մաշաւեր գետի վրայ, միանգամայն նման միւս ռուսաբնակ գիւղերին, միայն սրանց տները միմեանցից շատ չեն տարբերւում, որովհետև բնակիչներն էլ տնտեսական կողմից միմ

ցից շատ չեն զանազանում, որանց մէջ ոչ սաստիկ աղքատ և ոչ սատտիկ Հարուստներ կան: Բնակիչները վերաբնակուել են այստեղ Ախալքալաքի գաւառից, ընդամէնը՝ 50 տուն են. 264 ար 229 լիգ. ի միասին՝ 486 հոգի: Բացի սովորական պարապմունքից՝ զոտորուններն պարապում են նաև բեռնակրութեամբ: Գերմանական գաղութները երկուս են՝ Եկատերինէն-Ֆելդ և Ալէքսանդրսկիֆ:

Եկատերինէն-Ֆելդ կամ Սեծ Ռատոնւանը տեղաւորուած է Մաշաւեր գետի ձախ ափին, փոքր ինչ բարձր, ս. Գէորգ լեռան հանդէպ, մի Հարթութեան վրայ: Սրա հարաւային կողմում ձգւում է քարքարոտ և մերկ բլրակների մի շարք, որի վրայ կալ մի հինաւորաց մատուռ Գաղկեկանք անունով և մօտը մի զիւղատեղի: Մի քանի տարեառաջ այստեղ մի Հայ ըսկսել էր ճղնել և տասն և չորս օր ինքնակամ քաղցած մնալով՝ մեռել: Դետոյ շրջակայ գիւղերի հայերը լսել էին այդ մասին, եկել թաղել էին նրան եկեղեցու դաւթում, սուրբ Համարելով նրան: Մինչև այժմ էլ շրջակայ գիւղերից ուխտ են գալիս այստեղ թէ Հայեր և թէ վրացիներ: Թէ տեղացի գերմանացիները և թէ Հայերը կրկնեցին ինձ այն աւանդութիւնը, որ երբեմն ծերունիները պատմել էին Ս. եպ. Ջալալեանին, իբր թէ այստեղ պաշտում էր մի շատ զօրաւոր խաչ (ըստ Ջալալեանի ս. Վարվառայ կուսի մասունքը), և իբր երբ ծաղիկ հիւանդութիւնը սաստիկ տարածւում է Իմերէթում, տեղական իշխան Գագեանը խնդրում է Հերակլ Թաղաւորից այս խաչը, կոտորածին վերջ դնելու հաւատով, և սա ուղարկում է, նախապէս հինգ տուն ստրուկ պատանդ վերցնելով: Սակայն պարսից պատերազմների պատճառով խաչը չի վերադարձւում և պատանդները մնում են այստեղ:

Այժմեան գաղութը սկզբում բաղկացած է եղել միայն երկու երկար փողոցներից, սակայն երբ 1826 թուին պարսիկները թալանեցին գիւղը և շատերին գերի վարեցին, որանք հինգ զուգընթաց փողոցների վրայ տեղաւորուեցին, և փողոցների ծայրերին էլ պատնէշներ քաշեցին, միմեանց պաշտպանելու նպատակով: Գիւղի կենտրոնում, փոքրիկ հրապարակի վրայ

բարձրանում է գլխական ոճով շինուած եկեղեցին, որի մօտ գտնւում է պետական միդասեան դպրոցը, դեղատունը, բժշկանոցը, կառավարութիւնը և մի մեծ աղբիւր:

Տները երկյարկանի են և իւրաքանչիւրն ունի առանձին, ընդարձակ գաւիթ: Թէ փողոցների երկու կողմում և թէ գաւիթներում տնկուած են ծառեր: Գաղութի միջով անցնում հն երկու ջրանցք, որ բերել են գաղութի Հաշուվ: Գաղութում կան իւր պատրաստելու չորս և օղի քաշելու մի գործարան, բաւականաչափ խանութներ, բայց ոչ փոստատուն:

Բնակիչները Վիւրտեմբուրգից 1818 թուին գաղթած գերմանացիներ են, որ նախ բնակուել են Համբուրի մօտ և ապա մի տարուց յետոյ այստեղ տեղափոխուել, որովհետև այնտեղի օղը անտանելի է եղել: Սրանք դեռ ևս պահպանում են իրենց ներքին ինքնուրոյն կառավարութիւնը, ունին մի շիւղ, իւր երկու օգնականներով և մի զրազրով, որ վարում է գաղութի բոլոր գործերը: Դրեթէ բոլորը գիտեն գերմաներէն գրել կարգալ, բոլորն էլ խօսում են թուրքերէն և մասամբ ռուսերէն և Հայերէն: Ընդամէնը 226 տուն են, 779 ար. 838 իգ. իմիասին՝ 1617 հոգի: Քառասուն տուն էլ ժամանակաւոր բնակողներ կան: Գլխաւորապէս պարապում են զինեգործութեամբ և ունին շատ ընդարձակ այգիներ, մասամբ էլ երկրագործութեամբ, որ Հայերից են սովորել:

Այստեղ են բնակւում այս ոստիկանական շրջանի ոստիկանը, Հաշտարար դատաւորը, 10 հոգուց բաղկացած պահապանների խումբը: